Կ-1327-20.04.2026-ՏՀ-011

Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «ծառայություններ, աշխատանքներ կամ ապրանքներ գովազդելու նպատակով կազմակերպվող գովազդային վիճակախաղի վրա, որի շահումային ֆոնդը չի գերազանցում գովազդային վիճակախաղ կազմակերպողի նախորդ տարվա իրացման շրջանառության կամ ընթացիկ տարվա իրացման շրջանառության համապատասխանաբար 0.5 տոկոսը կազմող գումարներից առավելագույնը:» պարբերությունից հետո լրացնել հետեւյալ նոր պարբերություն հետեւյալ բովանդակությամբ՝ «գովազդային վիճակախաղի կազմակերպիչ կարող է հանդիսանալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որն իր ծառայությունները, աշխատանքները կամ ապրանքները գովազդելու նպատակով կազմակերպում է գովազդային վիճակախաղ, որի մրցանակային ֆոնդը ձեւավորվում է բացառապես կազմակերպչի սեփական միջոցների հաշվին եւ արտահայտված է իրային (բնամթերային) ձեւով: Ընդ որում, Գովազդային վիճակախաղի կազմակերպման եւ իրականացման գործընթացը գովազդային ծառայություն մատուցողի կողմից իրականացվելու դեպքում գովազդային վիճակախաղի կազմակերպիչ է համարվում գովազդ պատվիրողը:» եւ 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանել «Ընդ որում, շահումային ֆոնդը պետք է ձեւավորվի գովազդային վիճակախաղ կազմակերպողի սեփական միջոցների հաշվին» բառերը»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում «դրամային միջոց» բառերից հետո լրացնել «,որի միջոցով որոշվում է խաղի արդյունքը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետում «խաղային հաշվի ստեղծումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ վիճակախաղերի» բառերը:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի ը) ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ը. խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն անկանխիկ եղանակով՝ բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով, բացառությամբ որպես օտարերկրացի նույնականացված խաղացողների»:

Հոդված 5. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 7-րդ կետում «խաղային հաշիվների համալրումն» բառերից հետո լրացնել «եւ կազմակերպչի կողմից դրամական շահումների հանձնումը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 12-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12) նախքան խաղի գովազդի հրապարակումը Լիազոր մարմնի սահմանված կարգով դրա բովանդակության էլեկտրոնային տարբերակով համաձայնեցումը Լիազոր մարմնի հետ: Ընդ որում, Լիազոր մարմինը չի տալիս իր համաձայնությունը, եթե գովազդը հակասում է սույն օրենքին, «Գովազդի մասին» օրենքին խաղային գործունեության կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի դրույթներին, պարունակում է թյուր կամ ապակողմնորոշող տեղեկություններ.»

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 8. Խաղային գործունեության կազմակերպման ընդհանուր սահմանափակումները*

1. Արգելվում է՝

1) Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորության ստեղծումը, նման մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի հասանելիությունը, ինչպես նաեւ չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում հասանելի ամբողջ համացանցի տիրույթում.

2) Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված վճարային ծառայություններ մատուցողների կողմից Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված խաղային կազմակերպիչների օգտին վճարների կատարումը՝ համապատասխան քարտային համակարգի կողմից սահմանված խաղային բիզնես գործունեության նույնականացման ծածկագրի՝ առևտրային կազմակերպությունների գործունեության կոդի (MCC(Merchant Category Code)) միջոցով:

2. Կառավարությունը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի արգելափակման կարգը եւ ժամկետները, ինչպես նաեւ սահմանում է արգելափակման ենթակա կայքերի ցանկի վարման, հաստատման եւ պետական մարմիններին և այլ կազմակերպություններին հասանելիության տրամադրման կարգը:

3. Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերը ենթակա են արգելափակման ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից՝ Կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում:

Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի, ինչպես նաեւ դրանց պատկանող բոլոր ապրանքային նշանների միջոցով խաղային գործունեության կազմակերպման նպատակով դրամական միջոցների ստացման եւ փոխանցման գործարքները ենթակա են սահմանափակման Հայաստանի Հանրապետության առեւտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից՝ Կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում եւ խաղային բիզնես գործունեության նույնականացման ծածկագրի (MCC ծածկագիր) միջոցով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների խախտման դեպքում Վերահսկող մարմինը ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների նկատմամբ կիրառում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

5. Արգելվում է օրենսդրությամբ սահմանված դեպքերում օպերատորի մոնիտորինգային կենտրոնին չմիացված կամ սույն օրենքով նախատեսված սերտիֆիկատ չունեցող խաղային արտադրանքներով խաղային գործունեության կազմակերպումը:

6. Արգելվում է կազմակերպության անվանման կամ ֆիրմային անվանման կամ ապրանքային նշանի կամ կայքերի անվանման կամ ցուցանակների մեջ «շահումով խաղ» (այդ թվում՝ «խաղատուն», «խաղասրահ»), «ինտերնետ շահումով խաղ», «վիճակախաղ», «բուքմեյքերային գործունեություն» (այդ թվում՝ «բուքմեյքերային գրասենյակ», «տոտալիզատոր») բառերի, դրանց ածանցյալների կամ

թարգմանությունների օգտագործումն այն անձանց կողմից, որոնք չունեն սույն օրենքով սահմանված խաղային գործունեության համապատասխան լիցենզիա:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասից հանել «խաղային ինտերակտիվ հարթակում կամ» բառերը:

Հոդված 9. Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «կայքերի եւ հավելվածների միջոցով, ինչպես նաեւ» բառերը:

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում «կայքերի (հասցեների), հավելվածների եւ» բառերը փոխարինել «հասցեների» բառերով:

Հոդված 11. Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի կազմակերպիչն ապահովում է խաղարկությանը մասնակցող տոմսերի (բացառությամբ որպես շահում խաղարկությանը մասնակցող տոմսերի) ընդհանուր արժեքի առնվազն կեսի չափով շահումային ֆոնդի ձեւավորումն ու մասնակիցների միջեւ բաշխումը:»

Հոդված 12. Օրենքի 21-րդ հոդվածի 14-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «11-րդ մասի 11-րդ և 12-րդ կետերով» բառերից հետո հանել «և 8-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը և 2-րդ մասի 4-րդ կետում «11-րդ մասով» բառերը փոխարինել «6-րդ մասով»:

Հոդված 14. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«7. գովազդային վիճակախաղի կազմակերպման եւ իրականացման գործընթացը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կամ պետական հաշվառում չստացած անձանց պատվիրելու դեպքում գովազդատու եւ գովազդակիր իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ կիրառվում է տուգանք Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարույթով եւ չափով»»:

Հոդված 15. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «9-րդ հոդվածով» բառերից հետո լրացնել «կամ 19-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերը:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Օրենքի գործողության մեջ դրվելու օրվանից:

Հոդված 17.Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյաժամկետում:

Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում
~~ՆԱԽԱԳԻԾ~~

Կ-1327-20.04.2026-ՏՀ-011/1~~0~~

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «ծառայություններ, աշխատանքներ կամ ապրանքներ գովազդելու նպատակով կազմակերպվող գովազդային վիճակախաղի վրա, որի շահումային ֆոնդը չի գերազանցում գովազդային վիճակախաղ կազմակերպողի նախորդ տարվա իրացման շրջանառության կամ ընթացիկ տարվա իրացման շրջանառության համապատասխանաբար 0.5 տոկոսը կազմող գումարներից առավելագույնը:» պարբերությունից հետո լրացնել հետեւյալ նոր պարբերություն հետեւյալ բովանդակությամբ՝ «գովազդային վիճակախաղի կազմակերպիչ կարող է հանդիսանալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որն իր ծառայությունները, աշխատանքները կամ ապրանքները գովազդելու նպատակով կազմակերպում է գովազդային վիճակախաղ, որի մրցանակային ֆոնդը ձեւավորվում է բացառապես կազմակերպչի սեփական միջոցների հաշվին եւ արտահայտված է իրային (բնամթերային) ձեւով: Ընդ որում, Գովազդային վիճակախաղի կազմակերպման եւ իրականացման գործընթացը գովազդային ծառայություն մատուցողի կողմից իրականացվելու դեպքում գովազդային վիճակախաղի կազմակերպիչ է համարվում գովազդ պատվիրողը:» եւ 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանել «Ընդ որում, շահումային ֆոնդը պետք է ձեւավորվի գովազդային վիճակախաղ կազմակերպողի սեփական միջոցների հաշվին» բառերը»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում «դրամային միջոց» բառերից հետո լրացնել «,որի միջոցով որոշվում է խաղի արդյունքը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետում «խաղային հաշվի ստեղծումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ վիճակախաղերի» բառերը:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի ը) ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ը. խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն անկանխիկ եղանակով՝ բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով, բացառությամբ որպես օտարերկրացի նույնականացված խաղացողների»:

Հոդված 5. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 7-րդ կետում «խաղային հաշիվների համալրումն» բառերից հետո լրացնել «եւ կազմակերպչի կողմից դրամական շահումների հանձնումը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 12-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12) նախքան ~~շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, վիճակախաղի եւ բուքմեյքերային խաղի գործունեության~~ գովազդի հրապարակումը Լիազոր մարմնի սահմանված կարգով դրա բովանդակության էլեկտրոնային տարբերակով համաձայնեցումը Լիազոր մարմնի հետ: Ընդ որում, Լիազոր մարմինը չի տալիս իր համաձայնությունը, եթե գովազդը հակասում է սույն օրենքին, «Գովազդի մասին» օրենքին~~, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, վիճակախաղի եւ բուքմեյքերային գործունեության~~ խաղային գործունեության կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի դրույթներին, պարունակում է թյուր կամ ապակողմնորոշող տեղեկություններ.»

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 8. Խաղային գործունեության կազմակերպման ընդհանուր սահմանափակումները*

1. Արգելվում է՝

1) Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորության ստեղծումը, նման մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի հասանելիությունը,

ինչպես նաեւ չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում հասանելի ամբողջ համացանցի տիրույթում.

~~2) Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունում հասանելի ամբողջ համացանցի տիրույթում:~~

2~~3~~) Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված վճարային ծառայություններ մատուցողների կողմից Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված խաղային կազմակերպիչների օգտին վճարների կատարումը՝ համապատասխան քարտային համակարգի կողմից սահմանված խաղային բիզնես գործունեության նույնականացման ծածկագրի՝ առևտրային կազմակերպությունների գործունեության կոդի (MCC(Merchant Category Code) ~~ծածկագիր~~) միջոցով-:

2. Կառավարությունը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի արգելափակման կարգը եւ ժամկետները, ինչպես նաեւ սահմանում է արգելափակման ենթակա կայքերի ցանկի վարման, հաստատման եւ պետական մարմիններին և~~եւ~~ այլ կազմակերպություններին հասանելիության տրամադրման կարգը:

3. Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերը ենթակա են արգելափակման ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից՝ Կ~~կ~~առավարության սահմանած կարգով եւ ժամկետներում:

Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի, ինչպես նաեւ դրանց պատկանող բոլոր ապրանքային նշանների միջոցով խաղային գործունեության կազմակերպման նպատակով դրամական միջոցների ստացման եւ փոխանցման գործարքները ենթակա են սահմանափակման Հայաստանի Հանրապետության առեւտրային բանկերի և~~եւ~~ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից՝ Կ~~կ~~առավարության սահմանած կարգով եւ ժամկետներում եւ խաղային բիզնես գործունեության նույնականացման ծածկագրի (MCC ծածկագիր) միջոցով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների խախտման դեպքում Վվերահսկող մարմինը ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների նկատմամբ կիրառում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

5. Արգելվում է օրենսդրությամբ սահմանված դեպքերում օպերատորի մոնիտորինգային կենտրոնին չմիացված կամ սույն օրենքով նախատեսված սերտիֆիկատ չունեցող խաղային արտադրանքներով խաղային գործունեության կազմակերպումը:

6. Արգելվում է կազմակերպության անվանման կամ ֆիրմային անվանման կամ ապրանքային նշանի կամ կայքերի անվանման կամ ցուցանակների մեջ «շահումով խաղ» (այդ թվում՝ «խաղատուն», «խաղասրահ»), «ինտերնետ շահումով խաղ», «վիճակախաղ», «բուքմեյքերային գործունեություն» (այդ թվում՝ «բուքմեյքերային գրասենյակ», «տոտալիզատոր») բառերի, դրանց ածանցյալների կամ թարգմանությունների օգտագործումն այն անձանց կողմից, որոնք չունեն սույն օրենքով սահմանված խաղային գործունեության համապատասխան լիցենզիա:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասից հանել «խաղային ինտերակտիվ հարթակում կամ» բառերը:

Հոդված 9. Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «կայքերի եւ հավելվածների միջոցով, ինչպես նաեւ» բառերը:

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում «կայքերի (հասցեների), հավելվածների եւ» բառերը փոխարինել «հասցեների» բառերով:

Հոդված 11. Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի կազմակերպիչն ապահովում է խաղարկությանը մասնակցող տոմսերի (բացառությամբ որպես շահում խաղարկությանը մասնակցող տոմսերի) ընդհանուր արժեքի առնվազն կեսի չափով շահումային ֆոնդի ձեւավորումն ու մասնակիցների միջեւ բաշխումը:»

Հոդված 12. Օրենքի 21-րդ հոդվածի 14-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «11-րդ մասի 11-րդ և 12-րդ կետերով» բառերից հետո լրացնել «կետով» բառը եւ հանել «և 12-րդ կետերով եւ 8-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը և 2-րդ մասի 4-րդ կետում «11-րդ մասով» բառերը փոխարինել «6-րդ մասով»:

Հոդված 14. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«7. գովազդային վիճակախաղի կազմակերպման եւ իրականացման գործընթացը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կամ պետական հաշվառում չստացած անձանց պատվիրելու դեպքում գովազդատու եւ գովազդակիր իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ կիրառվում է տուգանք Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարույթով եւ չափով»»:

Հոդված 15. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «9-րդ հոդվածով» բառերից հետո լրացնել «կամ 19-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերը:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~«Խաղային գործունեության կարգավորման մասին» << օ~~Օրենքի գործողության մեջ դրվելու օրվանից:

Հոդված 17.Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ~~ժամկետում~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-1327-20.04.2026-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ					
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված	«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 6-րդ հոդվածով «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 11-րդ մասի 12-րդ կետը նոր խմբագրությամբ շարադրելիս	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առաջարկում ենք «նախքան» բառին հաջորդող «շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, վիճակախաղի և բուքմեյքերային գործունեության» բառերը փոխարինել «խաղի» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվող «խաղ» հասկացությունն իրենից ներկայացնում է վերոնշյալ չորս տեսակի խաղերն իր մեջ ներառող հավաքական եզրույթ: Վերոգրյալը հիմնավորմամբ առաջարկում ենք նաև Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի՝ 5-րդ հոդվածի 11-րդ մասի նոր խմբագրությամբ շարադրվող 12-րդ կետում «կազմակերպման» բառին նախորդող «շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, վիճակախաղի և բուքմեյքերային գործունեության» բառերը		

			փոխարինել «խաղային գործունեության» բառերով:		

2.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կիրառվում են «խաղային բիզնես գործունեության նույնականացման ծածկագրի (MCC ծածկագիր)» բառերը: Մեջբերված հապավման կապակցությամբ նախ նշենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտերում օտարերկրյա կազմակերպությունների անվանումները, ֆիզիկական անձանց անունները, աշխարհագրական օբյեկտների անունները, դրանց հապավումները, ինչպես նաև թարգմանության ոչ ենթակա իրավական, ֆինանսական, տեխնիկական և այլ տերմինները (եզրույթները) գրվում են հայերեն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տառադարձությամբ: Անհրաժեշտության դեպքերում հայերեն հապավումների կամ տերմինների հետ փակագծերում կարող են կիրառվել նաև լատիներեն կամ օտարալեզու հապավումներ կամ տերմիններ», հետևաբար առաջարկում ենք շարադրել այդ հապավումը հայերեն տառադարձությամբ: Բացի այդ՝ նշենք, որ Նախագծից հստակ չէ, թե ինչ է իրենից ներկայացնում խաղային բիզնես գործունեության նույնականացման ծածկագիրը (MCC ծածկագիր): Այսպես՝ բիզնես միջավայրում «MCC» հապավումը կարող է կիրառվել «Merchant Category Code» իմաստով, ինչը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի		

			պաշտոնական փաստաթղթերում թարգմանվել է ինչպես «վաճառակետի տեսակի կոդ»: Վերոգրյալը հիմք ընդունելով՝ նշենք, որ հասկանալի չէ, թե արդյոք Նախագծում կիրառվող «MCC» հապավումը բացահայտվում է «Merchant Category Code» բառակապակցության իմաստով, թե՝ ոչ: Եթե ոչ, ապա իրավական շփոթից խուսափելու համար անհրաժեշտ է Նախագծում նշել «MCC» հապավման ամբողջական տարբերակը, եթե այո, ապա առկա է հակասություն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի հետ, որի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ		

			հասկացություններ կամ տերմիններ»: Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ հոդվածի 3-րդ մասում «կառավարության» բառն առաջարկում ենք շարադրել մեծատառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենքում կիրառվում է «Կառավարություն» տարբերակը, ինչպես նաև հաշվի առնելով նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի ողջ տեքստում ցանկացած հոլովածով կիրառված «կառավարություն» և «վերահսկող մարմին»		

			բառերին:		
3.		«Խաղային գործունեության	Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի 8-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու	Չի ընդունվել: «Խաղային	Չի ընդունվել:

		կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված	արդյունքում դրանով սահմանվում է կայքերի արգելափակման նոր ընթացակարգ, մինչդեռ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքների՝ այդ հարաբերությունները կարգավորող հոդվածներում որևէ փոփոխություն չի կատարվում: Արդյունքում առկա է հակասություն Նախագծի և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքների միջև:	գործունեության կարգավորման մասին» օրենքը գործողության մեջ է դրվում խաղային գործունեության ոլորտի օպերատոր սահմանելու օրվանից հետո՝ վեցերորդ ամիսը լրանալու հաջորդ օրը: Սույն օրենքը գործողության մեջ դրվելու օրվանից ուժը կորցրած են ճանաչվում «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքը, «Վիճակախաղերի մասին» օրենքը, ինչպես նաև խաղային գործունեության կարգավորման ոլորտում գործող՝ սույն օրենքի կարգավորման առարկային վերաբերող այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ այն մասով, որով դրանք հակասում են սույն օրենքին կամ	

				կարգավորում են սույն օրենքով ամբողջությամբ կարգավորված հարաբերություններ:	
4.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-10-րդ հոդված	Նախագծի 8-10-րդ հոդվածներով Օրենքի 18-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու արդյունքում դրանցից բխում է, թե Նախագիծը նպատակ է հետապնդում վիճակախերը կազմակերպել միայն խաղասրահներում, մինչդեռ «Վիճակախաղերի մասին» օրենքում համապատասխան փոփոխություններ չեն կատարվում, ինչի արդյունքում հստակ չէ, թե արդյոք Նախագծով ենթադրվում է վիճակախաղերի կազմակերպումը խաղասրահներից դուրս, մանսավորապես՝ կայքերի և հավելվածների միջոցով,	Չի ընդունվել: «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքը գործողության մեջ է դրվում խաղային գործունեության ոլորտի օպերատոր սահմանելու օրվանից հետո՝ վեցերորդ ամիսը լրանալու հաջորդ օրը: Սույն օրենքը գործողության մեջ դրվելու օրվանից ուժը կորցրած են ճանաչվում «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքը, «Վիճակախաղերի մասին» օրենքը, ինչպես նաև խաղային գործունեության	Չի ընդունվել:

			արգելել, թե՝ ոչ: Վերոգրյալը հիմք ընդունելով՝ նշենք, որ Նախագիծն ունի հստակեցման կարիք:	կարգավորման ոլորտում գործող՝ սույն օրենքի կարգավորման առարկային վերաբերող այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ այն մասով, որով դրանք հակասում են սույն օրենքին կամ կարգավորում են սույն օրենքով ամբողջությամբ կարգավորված հարաբերություններ:	
5.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածում «խմբագրությամբ.» բառից հետո նշված նախադասությունն առաջարկում ենք շարադրել չակերտներում:	Ընդունվել է:	Ընդունվել է:

6.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդված	Նախագծի 13-րդ հոդվածն առաջարկում ենք հստակեցնել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում առկա են երկու «11-րդ» թվականներ, միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածում նշված «11-րդ» թվականը շարադրել չակերտներում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդված	Նախագծի 13-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 55-րդ հոդվածից հանել «եւ 12-րդ կետերով եւ 8-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը, ինչի արդյունքում Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների չկատարումը չի հանգեցնում որևէ պատասխանատվության: Այսպես՝ Օրենքի 53-57-րդ հոդվածներով հստակ և	Ընդուվել է մասնակի: Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների չկատարումը արդեն իսկ միևնույն հոդվածի 7-րդ մասով սահմանված պատասխանատվության տեսակ է նախատեսում	Ընդուվել է մասնակի:

			սպառիչ սահմանվում է, թե Օրենքի որ դրույթի պահանջը չկատարելը որ տեսակի պատասխանատվության է հանգեցնում, հետևաբար՝ Նախագծի 13-րդ հոդվածով կատարվող փոփոխության արդյունքում Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների չկատարումը չի հանգեցնում որևէ պատասխանատվության: Այս համատեքստում հատկանշական է, որ Օրենքի 53-57-րդ հոդվածները պարունակում են հստակ նշում Օրենքի այն դրույթների վերաբերյալ, որոնց պահանջները խախտելու համար պատասխանատվությունը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում:	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով:	

8.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդված	. Նախագծի 16-րդ հոդվածում նշված «Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենքի» բառերի կապակցությամբ նախ նշենք, որ Նախագծի 1-ին հոդվածով նշված է. ««Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)», հետևաբար այդ օրենքին հղում կատարելիս պետք է կիրառվի «Օրենք» բառը, այլ ոչ դրա վերնագիրը: Այս դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջից, այն է. «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը»: Բացի այդ Օրենքին հղում կատարելիս «ՀՀ» հապավումը կիրառելը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին, հետևաբար առաջարկում ենք Նախագծերի փաթեթում բացառել այդ հապավման կիրառումը:		
9.		«Խաղային գործունեության	Նախագծի 16-րդ հոդվածում առաջարկում ենք «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդված	իրավական» բառեը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ինչպես նաև նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծերի փաթեթի այլ դրույթներում ցանկացած հոլովաձևով կիրառվող «ենթաօրենսդրական ակտ» բառերին:		
10.		«Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նախագծի 4-րդ հոդվածում նախատեսվում է կատարել փոփոխություն, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը»: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրին, որտեղ «ԼՐԱՑՈՒՄ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով:		
11.		«Գովազդի մասին» օրենքում լրացումներ	«Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Գովազդի	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	մասին» օրենքի 2-րդ հոդվածում լրացվող պարբերությունների 1-ից 4-ը համարակալումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ հոդվածում պարբերությունները համարակալված չեն, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձեւը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին)»: «Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Գովազդի մասին» օրենքի 2-րդ հոդվածում լրացվող առաջին		

			պարբերության «ա» կետում առկա «/» կետադրական նշանն առաջարկում ենք խմբագրել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայերենում նման կետադրական նշան առկա չէ:		
12.		«Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	«Գովազդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածում առաջարկում ենք «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով: Սույն դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգավորումներից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.		«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին»	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:		
14.		«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետությունում	Չի ընդունվել: Խաղային գործունեության ոլորտում իրականացվող հսկիչ գնումների առանձնահատկությունները նախատեսվում է սահմանել ՀՀ Կառավարության 17.07.2017 թվականի թիվ	Չի ընդունվել:

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ կետ	ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքի 3-րդ հոդվածում լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. «Խաղային գործունեության կազմակերպիչների նկատմամբ իրականացվող լիցենզավորման պայմանների եւ պահանջների ստուգումների շրջանակներում կարող են իրականացվել նաեւ հսկիչ գնումներ: Հսկիչ գնումների իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Այդ օրենքի գործող կարգավորումներով հսկիչ գնումներ իրականցվում են միայն դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում: Հատկանշական է, որ «Հայաստանի	904-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ սահմանելով:	

			Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի՝ «Օրենքի գործողության ոլորտը և կարգավորման առարկան» վերտառությամբ 1-ին հոդվածի 2.1-ին մասով սահմանված է. «Դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում կարող է իրականացվել նաև հսկիչ գնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով», բացի այդ՝ օրենքի մի շարք դրույթներում առանձին կարգավորումներ են սահմանված դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում իրականացվող հսկիչ գնումների վերաբերյալ, մինչդեռ քննարկվող նախագծով վերը մեջբերված դրույթից բացի այլ		

			կարգավորում չի սահմանվում խաղային գործունեության կազմակերպիչների նկատմամբ իրականացվող լիցենզավորման պայմանների և պահանջների ստուգումների շրջանակներում իրականացվող հսկիչ գնումների վերաբերյալ: Վերոգրյալը հիմք ընդունելով՝ նշենք, որ հասկանալի չէ դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում իրականցվող հսկիչ գնումների և խաղային գործունեության կազմակերպիչների նկատմամբ իրականացվող լիցենզավորման պայմանների և պահանջների ստուգումների շրջանակներում իրականացվող հսկիչ գնումների վերաբերյալ սահմանվող		

			կարգավորումների հարցում ցուցաբերվող ոչ միատեսակ մոտեցումը:		
15.		«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին հղում կատարելիս առաջարկում ենք շարադրել վերջինիս լրիվ անվանումը: Սույն դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջից, այն է. «Հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում» և 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջից. «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն»:		
16.		«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է Վարչական	Չի ընդունվել: Պատվեր կատարելու փաստն ինքնին առաջացնում է պատասխանատվություն, քանզի հակառակ	Չի ընդունվել:

		փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացնել նոր՝ 150.17-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Գովազդային վիճակախաղի կազմակերպման եւ իրականացման գործընթացը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կամ պետական հաշվառում չստացած անձանց պատվիրելը գովազդատու եւ գովազդակիր իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ	պարագայում հնարավոր չէ իրականացնել քննարկվող ոլորտի արդյունավետ վերահսկողություն:	

			առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր խախտման համար տաս միլիոն դրամի չափով»: Նշենք, որ այս կարգավորման մեջ կիրառվող «սահմանված կարգով պետական գրանցում կամ պետական հաշվառում չստացած անձանց պատվիրելը գովազդատու եւ գովազդակիր իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում» ձեւակերպումը բավականաչափ հստակ չէ, մասնավորապես դրանից բխում է, թե սահմանված կարգով պետական գրանցում կամ պետական հաշվառում չստացած անձանց կողմից պատվեր կատարելու փաստն է ինքնին առաջացնում		

			պատասխանատվություն գովազդատու եւ գովազդակիր իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ, իսկ վերջիններիս կողմից այդ պատվերը չընդունելու կամ պատվերը չբավարարելու հնարավորություն ընդհանրապես չի նախատեսվում, ինչի արդյունքում այդ հանգամանքները հաշվի չեն առնվում եւ որեւէ կերպ չեն ազդում նշյալ դեպքի ելքի վրա: Արդյունքում խախտվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված՝ վարչական տույժ նշանակելու ընդհանուր կանոններից հետեւյալը՝ «Տույժ նշանակելիս հաշվի են		

			առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները», քանի որ քննարկվող դրույթում մեղքի գործոնն ընդհանրապես հաշվի չի առնվում: Առաջարկում ենք, վերոգրյալը հիմք ընդունելով, խմբագրել քննարկվող դրույթը:		
17.		«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն ունի երկու 2-րդ հոդված, առաջարկում ենք այդ վրիպակը շտկել	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մասին» օրենքի նախագիծ			
18.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	1-ին հոդվածով նախատեսվում է «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «ծառայություններ, աշխատանքներ կամ ապրանքներ գովազդելու նպատակով կազմակերպվող գովազդային վիճակախաղի վրա, որի շահումային ֆոնդը չի գերազանցում գովազդային վիճակախաղ կազմակերպողի նախորդ տարվա իրացման շրջանառության կամ ընթացիկ տարվա իրացման շրջանառության համապատասխանաբար 0.5 տոկոսը կազմող գումարներից առավելագույնը:»	Չի ընդունվել: Նախագծի հիմնավորմամբ ներկայացված է գովազդային վիճակախաղի սահմանման նպատակը:	Չի ընդունվել:

			պարբերությունից հետո լրացնել հետևյալ նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ «**գովազդային վիճակախաղի կազմակերպիչ կարող է հանդիսանալ** իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որն իր ծառայությունները, աշխատանքները կամ ապրանքները գովազդելու նպատակով կազմակերպում է գովազդային վիճակախաղ, որի մրցանակային ֆոնդը ձևավորվում է բացառապես կազմակերպչի սեփական միջոցների հաշվին և արտահայտված է իրային (բնամթերային) ձևով: Ընդ որում, Գովազդային վիճակախաղի կազմակերպման և իրականացման գործընթացը գովազդային ծառայություն մատուցողի կողմից		

			իրականացվելու դեպքում գովազդային վիճակախաղի կազմակերպիչ է համարվում գովազդ պատվիրողը:» և 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանել «Ընդ որում, շահումային ֆոնդը պետք է ձևավորվի գովազդային վիճակախաղ կազմակերպողի սեփական միջոցների հաշվին» բառերը»: Վերոնշյալ կարգավորման կապակցությամբ անդրադառնալով Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված դրույթին, որի համաձայն՝ **Սույն օրենքի գործողությունը չի տարածվում՝ ծառայություններ, աշխատանքներ կամ ապրանքներ գովազդելու նպատակով կազմակերպվող**		

			գովազդային վիճակախաղի վրա, որի շահումային ֆոնդը չի գերազանցում գովազդային վիճակախաղ կազմակերպողի նախորդ տարվա իրացման շրջանառության կամ ընթացիկ տարվա իրացման շրջանառության համապատասխանաբար 0.5 տոկոսը կազմող գումարներից առավելագույնը, անհասկանալի է Նախագիծ 1-ի 1-ին հոդվածով առաջարկվող «**գովազդային վիճակախաղի կազմակերպիչ»** հասկացության սահմանման անհրաժեշտությունն Օրենքում, եթե նույն Օրենքի դրույթները չեն տարածվելու այդ հասկացության իմաստով սահմանվող գովազդային վիճակախաղերի նկատմամբ: Բացի այդ, «**գովազդային**		

			վիճակախաղի կազմակերպիչ» հասկացությունը չունի հետագա կիրառում ոչ Օրենքի, ոչ Նախագիծ 1-ի այլ դրույթներում: Ուստի այս առումով ևս պարզաբանման կարիք ունի տվյալ հասկացության սահմանման նպատակը՝ նկատի ունենալով, որ նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորմամբ ևս անդրադարձ չի կատարվել Նախագիծ 1-ի 1-ին հոդվածով նախատեսվող լրացմանը: Միաժամանակ, եթե Օրենքում նախատեսվում է նոր հասկացություն սահմանել, որը ունենալու է հետագա կիրառում Օրենքի այլ դրույթներում, ապա նպատակահարմար է նոր հասկացությունը սահմանել Օրենքի 4-րդ հոդվածում: Հաշվի առնելով վերը		

			նշված դիտարկումները՝ առաջարկում ենք Նախագիծ 1-ի 1-ին հոդվածը վերանայել:		
19.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	7-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ Կառավարությունը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի արգելափակման կարգը և ժամկետները, ինչպես նաև	Չի ընդունվել: Նախագծի 8-րդ հոդվածում կատարված փոփոխության հիմնական նպատակը միջգերատեսչական երկարատև ընթացակարգից անցում կատարելն է դեպի ավելի կենտրոնացված և իրավասու մարմնի կողմից ղեկավարվող մեխանիզմ՝ ՀՀ Կառավարության սահմանած կարգով և ժամկետներում: Գործընթացը կարգավորվելու է ՀՀ կառավարության սահմանված ընթացակարգով:	Չի ընդունվել:

			սահմանում է արգելափակման ենթակա կայքերի ցանկի վարման, հաստատման և պետական մարմիններին և այլ կազմակերպություններին հասանելիության տրամադրման կարգը: Առաջարկում ենք կարգավորումը վերանայել և հստակեցնել, թե արգելափակման ենթակա կայքերի ցանկերն ու՞մ կողմից են սահմանվելու՝ նկատի ունենալով, որ Օրենքի գործող 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ սույն օրենքով նախատեսված		

			արգելափակման ենթակա կայքերի ցանկը հաստատում է Վերահսկող մարմնի ղեկավարը արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա: Մինչդեռ, 8-րդ հոդվածի նոր խմբագրության արդյունքում տվյալ հարցը մնում է չկարգավորված:		
20.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և	Նախագիծ 1-ի 13-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում **«11-րդ մասի 11-րդ» բառերից հետո**	Ընդունվել է:	Ընդունվել է:

		լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	**լրացնել «կետով» բառը** և հանել « և 8-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը: Կարծում ենք **«11-րդ մասի 11-րդ» բառերից հետո լրացնել «կետով» բառը** լրացնելու վերաբերյալ դրույթն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով, որ Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի գործող 3-րդ կետում կիրառված են «11-րդ մասի 11-րդ և 12-րդ **կետերով**» բառերը և **«11-րդ մասի 11-րդ» բառերից հետո «կետով» բառի** լրացման արդյունքում **«11-րդ մասի 11-րդ կետով և 12-րդ կետերով»** ձևակերպմամբ		

			կստացվի շարադասության անճշտություն, ուստի առաջարկում ենք վերանայել:		
21.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագիծ 1-ի 14-րդ հոդվածում կիրառվում է «**գովազդատու և գովազդակիր** իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ **անհատ ձեռնարկատիրոջ**» ձևակերպումը: Այս առումով հարկ է նշել, որ «Գովազդի մասին» օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հասկացությունների համաձայն «**գովազդատու»**	Չի ընդունվել: Նախատեսված փոփոխության նպատակը գովազդատու և գովազդակիր իրավաբանական անձի գործադիր մարմնի հենց ղեկավարին կամ անհատ ձեռնարկատիրոջը պատասխանատվության ենթարկելն է:	Չի ընդունվել:

			և «գովազդակիր» հասկացությունները սահմանված են որպես *«իրավաբանական և* ***ֆիզիկական անձինք****»:* Նշվածի համատեքստում առաջարկում ենք Նախագիծ 1-ի 14-րդ հոդվածը վերանայել և համապատասխանեցնել «Գովազդի մասին» օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հիշյալ դրույթների բովանդակությանը:		

22.		«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	16-րդ հոդվածում առկա չհամարակալված պարբերությունն առաջարկում ենք համարակալել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
23.		«Գովազդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	2-րդ հոդվածով «Գովազդի մասին» օրենքում նոր լրացվող 5.1-ին հոդվածի 2-րդ մասում առկա չհամարակալված պարբերությունն առաջարկում ենք համարակալել, միաժամանակ, նշված	Ընդունվել է:	Ընդունվել է:

			պարբերության բ) կետում **«Հայաստանի Հանրապետության տարածքում <u>օրենքով կամ այլ օրենքներով</u>»** ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով, որ «օրենքով» եզրույթի ընդհանրական ձևով կիրառմամբ արդեն իսկ նկատի են առնվում նաև այլ օրենքները, ուստի առաջարկում ենք «կամ այլ օրենքներով» բառերը հանել:		
24.		«Գովազդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»	3-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է **«Գովազդի մասին»** օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել	Ընդունվել է:	Ընդունվել է:

		օրենքի նախագիծ	հետևյալ բովանդակությամբ «ե» կետով. «ե) միջազգային առցանց գովազդային հարթակի ծառայություն մատուցողին, իսկ նրա ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև այդ ներկայացուցչին, **իսկ ներկայացուցչի բացակայության դեպքում՝ նրա կողմից հրապարակված պաշտոնական էլեկտրոնային հասցեին**, ներկայացնել ծանուցումներ (...)»: Նշված կարգավորման մեջ պարզ չէ՝ «նրա կողմից հրապարակված» բառերն ու՞մ են վերաբերում, ուստի		

			առաջարկում ենք հստակեցնել:		
25.		«Գովազդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	4-րդ հոդվածում «Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Օրենքի 26-րդ հոդվածի 2.2-րդ մասում» բառերով՝ նկատի ունենալով, որ **«Գովազդի մասին»** օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը 2.2-րդ կետ չունի:	Ընդունվել է:	Ընդունվել է:
26.		«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի	Նկատի ունենալով, որ Նախագիծ 3-ի 2-րդ հոդվածում Վարչական իրավախախտումների	Ընդունվել է:	Ընդունվել է:

		Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	վերաբերյալ օրենսգրքին հղում կատարելիս կիրառվում է «Օրենսգիրք» եզրույթը, առաջարկում ենք նախագծում դրա առաջին կիրառությունից հետո սահմանել կրճատ տարբերակը՝ հետագա կիրառման հստակությունն ապահովելու նպատակով: Դիտարկումը բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներից:		

27.		«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	2-րդ հոդվածի համաձայն՝ «**<u>Գովազդային վիճակախաղի կազմակերպման եւ իրականացման գործընթացը</u>** «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կամ պետական հաշվառում չստացած **<u>անձանց</u>**	Չի ընդունվել: Փոփոխության նպատակը առանց պետական գրանցման կամ պետական հաշվառման ֆիզիկական անձանց կողմից գովազդային վիճակախաղի անցկացման արգելքն է: (ինչը բխում է ներկայացված «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծից (14 հոդված))	Չի ընդունվել:

			<u>պատվիրելը գովազդատու</u> **<u>եւ գովազդակիր</u>** իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ **<u>առաջացնում է տուգանքի</u>** **<u>նշանակում</u>**՝ յուրաքանչյուր խախտման համար տաս միլիոն դրամի չափով:»: «Գովազդի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ **գովազդատու** (համարվում է) իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ներկայացնում է գովազդային տեղեկություն գովազդի արտադրության,		

			տեղաբաշխման և տարածման նպատակով. **գովազդակիր (համարվում է)** իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը, տրամադրելով համապատասխան միջոցներ, տեղաբաշխում և տարածում է գովազդը: Կարծում ենք, որ նախագծի կարգավորումը գովազդակրի մասով խնդրահարույց է, քանի որ «Գովազդի մասին» օրենքի իմաստով գովազդակիրը ոչ թե գովազդային վիճակախաղի կազմակերպման կամ իրականացման գործընթացի պատվիրատուն է, այլ		

			գովազդը տեղաբաշխող և տարածող անձը: Հետևաբար գովազդակրի նկատմամբ պատասխանատվությունը պետք է կապվի վերջինիս կողմից կատարված կոնկրետ գործողության կամ անգործության հետ, որպիսին չի հանդիսանում վերջինիս վիճակախաղի կազմակերպման և իրականացման գործընթացը պատվիրելը: Ուստի նշված համատեքստում կարգավորումն առաջարկում ենք հստակեցնել: Միաժամանակ, հարկ է նկատել, որ Նախագիծ 3-ի 2-րդ հոդվածում Վարչական		

			իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նոր լրացվող 150.18-րդ հոդվածով առաջարկվող՝ վարչական պատասխանատվություն նախատեսող կարգավորման բովանդակությունը չի բխում **«Գովազդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի** բովանդակությունից, բացի այդ, գործող **«Գովազդի մասին» օրենքում ևս** նոր լրացվող 150.18-րդ հոդվածներով նկարագրվող արարքների համար վարչական		

			պատասխանատվություն նախատեսող դրույթներ չեն պարունակում: Այս առումով անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված կարգավորմանը, որի համաձայն՝ ***Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում*** *պետական կամ հասարակական կարգի, պետության անվտանգության ապահովման, սոցիալիստական սեփականության,*		

			քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) ***այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար <u>օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն</u>:*** Վերը նշված կարգավորումից բխում է, որ օրենսդրությամբ պետք է նախատեսված լինի այն արարքը (***գործողությունը կամ անգործությունը***), որի համար նախատեսվում է		

			վարչական պատասխանատվություն: Ամփոփելով՝ գտնում ենք, որ «Գովազդի մասին» օրենքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նոր լրացվող 150.18-րդ հոդվածով նախատեսվող արարքների՝ վարչական պատասխանատվություն առաջացնելու վերաբերյալ համապատասխան դրույթների բացակայության պայմաններում միայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում պատասխանատվություն նախատեսելը խնդրահարույց է և չի բխում նույն օրենսգրքի 9-րդ հոդվածի տրամաբանությունից:		

28.		«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագիծ 3-ի 2-րդ հոդվածում առաջարկում ենք նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում տուգանքների սահմանման մոտեցումների միատեսակությունն ապահովելու նպատակով, սանկցիան նախատեսել նվազագույն աշխատավարձի բազմապատիկի արտահայտությամբ: Նման մոտեցումը կարևոր է հատկապես այն հանգամանքով պայմանավորված, որ նվազագույն աշխատավարձի չափի փոփոխության	Չի ընդունվել: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 150.17 հոդվածում նախատեսված տուգանքների չափը արտահայտված է դրամական միավորով և հենց տուգանքների սահմանման մոտեցումների միատեսակությունն ապահովելու նպատակով հաջորդող հոդվածում ևս նախատեսել ենք միանման մոտեցում:	Չի ընդունվել:

			դեպքում օրենսգրքով նախատեսված տուգանքների չափերը համամասնորեն կփոփոխվեն, մինչդեռ դրամային հստակ գումարով սահմանված սանկցիայի դեպքում տուգանքի չափը կմնա անփոփոխ:		
29.		«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	նախագծի 7-րդ հոդվածում «ՀՀ» հապավումն առաջարկում ենք հանել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:	Ընդունվել է:	Ընդունվել է:

30.		«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկություններ չկան:	Ընդունվել է:	Ընդունվել է: